# ԲԵՌՆԵՐԻ ՄՈՒՏՔ՝ ԼՂՀ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԿԱՅԱՐԱՆ

Վերջին երկու շաբաթուայ ընթացքում Ստեփանակերտի երկաթուղային կայարանը ընդունել է 110 վագոն, հաղորդում է «Խորհրդային Ղարաբաղ»ը։ Վագոնների շարժակազմում Արցախ է հասցուել ժողովրդական տնտեսութեան համար անհրաժեշտ ապրանքներ, որոնց մէջ կարեւորն են մէկական վագոն ծաւարեղէնն ու համակցուած կերը, ինչպէս նաեւ՝ 10 վագոն վառելիք։ Սակայն վերջին օրերս նուազել է երկաթուղային բեռների մուտքը ԼՂՀ երկաթուղային կայարան։ Նշենք, որ նոյն ժամանակահատուածում Ստեփանակերտից երկրի տարբեր շրջաններ են առաքուել 73 վագոն, բեռնուած ԼՂՀում արտադրուած ապրանքներով։